«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

«Աշակերտների մոտիվացիայի բարձրացումը խաղային տեխնոլոգիաների միջոցով»

Հետազոտող ուսուցիչ՝ Մնացականյան Վալյա

Արմավիրի մարզի Մեծամոր քաղաքի N 1 հիմն. դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Անտոնյան Արմինե

ԱՐՄԱՎԻՐ 2022

Բովանդակություն

Նախաբան ----------3

Գրականության ակնարկ ----------5

Գործնական համատեքստ ----------8

Եզրակացություն ----------15

Օգտագործված գրականության ցանկ ----------16

Նախաբան

Այսօրվա դրությամբ դպրոցում աշակերտների մոտիվացման խնդրի ուսումնասիրությունը դարձել է ավանդական խնդիրներից մեկը, որը մշտապես գտնվում է մանկավարժների ուշադրության կենտրոնում:

Ներկայումս հասարակությունը վերապրում է լուրջ սոցիալ-տնտեսական, իրավական, բարոյական և հոգևոր փոփոխություններ, որոնք ուղեկցվում են կրթության ոլորտում տեղի ունեցող զգալի փոփոխություններով: Այս պայմաններում մանկավարժների և առհասարակ դպրոցի առջև կարևոր խնդիր է դրված՝ ձևավորել կայուն հոգեբանական և մանկավարժական հիմքեր աշակերտների ուսումնական մոտիվացիան խթանելու և այն բարձր մակարդակի վրա պահելու ուղղությամբ: Մեծապես հենց դրանից է կախված աշակերտների ուսումնական ակտիվությունը և հետաքրքրվածությունը ուսումնական գործընթացով:

Տվյալ հետազոտական աշխատանքի ընթացքում փորձ է կատարվել վեր հանել և ուսումնասիրել այն խնդիրները, որոնք այս կամ այն առումով ազդեցություն են գործում դպրոցում սովորող աշակերտների ուսումնական մոտիվացիայի վրա, խթանում են այն կամ, ընդհակառակը, խոչընդոտում են դրա դրսևորումներին և զարգացմանը:

Մասնավորապես, հետազոտության ընթացքում խնդիր էր դրված ուսումնասիրելու հետևյալ կարևոր հարցադրումները՝ կապված աշակերտների մոտիվացիայի խթանման հետ.

1. Ինչպիսի՞ ազդեցություն ունի աշակերտների աշխատասիրության գործոնը՝ ուսումնական մոտիվացիայի խթանման գործում;
2. Ինչպիսի՞ ազդեցություն ունի աշակերտների կարգապահության գործոնը՝ ուսումնական մոտիվացիայի խթանման գործում;
3. Ինչպիսի՞ ազդեցություն ունի աշակերտների ուշադրության կենտրոնացման գործոնը՝ ուսումնական մոտիվացիայի խթանման գործում;

4. Ի՞նչ ազդեցություն կարող է թողնել նորարարակ տեխնոլոգիաների և ՏՀՏ ներգրավումը ուսումնական գործընթացում՝ աշակերտների ուսումնական մոտիվացիայի խթանման;
5. Ինչպիսի՞ ազդեցություն է թողնում խաղերի կիրառումը դասի ժամանակ՝ աշակերտների ուսումնական մոտիվացիայի խթանման վրա:

Հետազոտության օբյեկտն է հանդիսանում դասարանը, որն ընդգրկվել էր հետազոտական պրոցեսում, որպես ուսումնասիրվող խումբ:

Այսպիսով, առաջադրված խնդիրների և հարցադրումների վեր հանումը հանդիսացել են տվյալ հետազոտական աշխատանքի հիմքը: Առաջադրված հարցադրումների աստիճանական ուսումնասիրությունը թույլ է տվել հասնել հետազոտության բուն նպատակին՝ պարզել աշակերտների ուսումնական մոտիվացիայի վրա ազդող գործոններից մեկի՝ խաղային մեթոդիկայի, էությունը և դրա առանձնահատկությունները, շտկել առկա խնդիրները և նոր լուծումներ առաջարկել՝ ուսումնական պրոցեսը էլ ավելի հետաքրքրաշարժ և մոտիվացնող դարձնելու համար:

Գրականության ակնարկ

Ուսումնական մոտիվացիայի և մոտիվների խնդիրների ուսումնասիրությամբ բոլոր ժամանակներում զբաղվել են հայտնի հոգեբաններ, մանկավարժներ:

Ընդհանուր առմամբ, մասնագիտական գրականության մեջ մոտիվացիան դիտարկվում է, որպես բարդ, բազմաստիճան մի համակարգ, որը կարգավորում է անձի կենսագործունեությունը, նրա վարքը և գործելակերպը:

Այսպես, Ա. Մասլոուն դիտարկում էր մոտիվացիան, որպես. «բարդ, բազմաստիճան, անհամասեռ համակարգ, որը ներառու է անձի պահանջները, մոտիվները, հետաքրքրությունները, ձգտումները, կարգադրումները, էմոցիաները, նորմերը և արժեքները, որոնք պայմանավորված են անձի այս կամ այն պահանջմունքով» [Маслоу А. Мотивация и личность. – СПб., 2006, էջ 126]:

Ա.Ն.Լեոնտևի գործունեության տեսության համատեքստում մոտիվացիան մեկնաբանվու է, որպես «օբյեկտիվ գործոնների ամբողջություն, որոնք ոչ թե արտահակյտում են անձի ներքի պահանջները, այլ արտաքին ձգտումը՝ այդ պահանջմունքները բավարարելու» [Леонтьев, А. Н., Потребности, мотивы и эмоции, М.: Изд-во МГУ, 1971, էջ 63]:

Համաձայն Լ.Ի.Բոժովիչի, «մոտիվացիան ուղղվում է արտաքին աշխարհի այս կամ այն առարկաներին և գաղափարներին, պատկերացումնրին և ապրումներին, որոնք մարմնավորում են անձի պահանջները և լավագույնս արտահայտում են դրանք» [Божович, Л. И., Проблема развития мотивационной сферы ребенка, М.: Педагогика, 1972, `ջ 44]:

Այսպիսով, լայն իմաստով անձի մոտիվացիան կարելի է բնութագրել, որպես այն միջուկը, որին ձգտում են անձի արժեքային կողմնորոշումները, կարգադրությունները, սոցիալական սպասումները և ձգտումները կամային և այլ սոցիալ-հոգեբանական հատկությունները:

Ուսումնական գործունեությունը, որպես այդպիսին, բազմամոտիվացված է, քանի որ ուսումնական ակտիվությունն ունի մոտիվացման տարբեր աղբյուրներ:

Ընդունված է առանձնացնել ուսումնական մոտիվացիայի և ակտիվության երեք հիմնական աղբյուրներ՝

1. Ներքին,
2. Արտաքին,
3. Անձնային:

Մոտիվացիայի ներքին աղբյուրներն են աշակերտների ճանաչողական և սոցիալական պահանջմունքները:

Մոտիվացիայի արտաքին աղբյուրներն են աշակերտի կյանքի պայմանները, սպասումները և սոցիալական հնարավորությունները:

Մոտիվացիայի անձնային աղբյուրներն են պահանջմունքները, հետաքրքրությունները, կարգադրումները, կարծրատիպերը, որոնք պայմանավորում են ինքնակատարելագործման, ինքնահաստատման և ինքնակայացման ձգտումը, որը դրսևորվում է ուսումնական գործունեության մեջ:

Ուսումնական մոտիվացիայի այս երեք աղբյուրների փոխհամագործակցությունը ազդեցություն է թողնում ուսումնական գործունեության բնույթի և դրա արդյունքների վրա:

Մ.Վ.Մատյուխինան [Матюхина М.В. Мотивация учения младших школьников. – М.: Педагогика, 1984, էջ 25-30] առանձնացնում է ուսումնական մոտիվների երկու հիմնական խմբեր.

1. Մոտիվներ, որոնք ընկած են անմիջապես ուսումնական գործունեության հիմքում.
   - Մոտիվներ, որոնք կապված են ուսման բովանդակության հետ: Այս դեպքում աշակերտին սովորելու է դրդում նոր գիտելիքներ ստանալու ձգտումը:
   - Մոտիվներ, որոնք կապված են ուսման գործընթացի հետ: Այս դեպքում աշակերտին սովորելու է դրդում մտավոր ակտիվություն դրսևորելու, մտածելու, եզրահանգումներ կատարելու ձգտումը: Այսինքն, աշակերտին գրավում է ուսման գործընթացը, այլ ոչ թե միայն դրա արդյունքը:
2. Մոտիվներ, որոնք կապված են ուսումնական գործունեությունից դուրս ընկած գործոնների հետ.

- Լայն սոցիալական մոտիվներ. պարտքի զգացում ուսուցչի, ծնողների, համադասարանցիների, հասարակության առջև; ինքնորոշման և ինքնակատարելագործման մոտիվ;
- Նեղ անձնական մոտիվներ. խրախուսում ստանալու ձգտում, լավ գնահատականներ ստանալու և գովասանքի արժանանալու ձգտում; դասարանում առաջիններից մեկը լինելու, ընկերների շրջապատում արժանի տեղ զբաղեցնելու ձգտում և այլն:

Ինչպես նշում է Ա.Կ.Մարկովան [Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М.: Просвещение, 1990, էջ 46], եթե ուսումնական գործունեության ընթացքում աշակերտի մոտ նկատվում է ձգտում դեպի ուսուցանվող առարկայի բովանդակությունը, ուսումնական գործընթացն ընդհանուր առմամբ, ապա դա խոսում է այն մասին, որ տվյալ երեխան առաջնորդվում է ճանաչողական մոտիվներով: Իսկ եթե նրա մոտ գերակշռում է ձգտումը առանձնանալ այլ աշակերտների մեջ, գովասանքի արժանանալ ուսուցչի, ծնողների, այլ շրջապատող մարդկանց կողմից, ապա նա մոտիվացված է առավելապես սոցիալական մոտիվներով, և հենց դրանով է ուղղորդվում ուսումնական գործունեությունը:

Այսպիսով, ուսումնական ոտիվները կարող են կապված լինել ուսումնական գործընթացի բովանդակության և ընթացքի հետ, կարող են ունենալ սոցիալական և անձնային ուղղվածություն: Դրանք տարբեր կերպ կարող են արտահայտվել աշակերտների ուսումնական գործունեության ընթացքում:

Հարկ է նշել, որ ուսումնական մոտիվացիայի խթանման գործում շատ մեծ դերակատարություն ունի մանկավարժը և նրա կողմից ընտրված ուսուցման մեթոդները, որոնք ոչ իայն ուղղված են ուսումնական նյութը մատուցելուն, այլև աշակերտների մոտ դրա հանդեպ մեծ հետաքրքրություն առաջացնելուն, աշակերտների ուշադրությունը կենտրոնացնելուն, նրանց մեջ աշխատասիրություն և կարգապահություն սերմանելուն:

Գործնական համատեքստ

Անդրադարձ կատարելով հետազոտական աշխատանքի պրակտիկ հատվածին, առանձնացնենք այն գործոնները, որոնց վրա առաջնային ուշադրություն էի դարձրել իմ գործունեության ընթացքում՝ կապված աշակերտների մոտիվացիայի խթանման հետ:

Նախ և առաջ առանձնացրել էի այն հիմնական հարցադրումները և խնդիրները, որոնք, ըստ իս, անմիջական կերպով կապված են աշակերտների մոտիվացիայի հետ և ազդում են դրա բարձրացման կամ նվազման վրա: Այսպիսով, այդ հարցադրումների շարքում առանձնացրել եմ հետևյալները.

1. Ե՞րբ է անհրաժեշտ մոտիվացնել աշակերտներին;
2. Ինչպե՞ս է փոխվում աշակերտների մոտիվացիան դասերի ընթացքում՝ կախված այս կամ այն գործոնից;
3. Ի՞նչ գործոններ են ազդում աշակերտների մոտիվացիայի վրա;
4. Ինչպե՞ս բարձրացնել աշակերտների մոտիվացիան:

Իմ պրակտիկ մանկավարժական գործունեության ընթացքում առաջադրված հարցադրումներին պարզաբանում հաղորդելու համար բազմիցս առիթներ են եղել ձեռնարկելու մի շարք գործնական աշխատանքներ, որոնք կապված են եղել աշակետների մտիվացիայի աստիճանը գնահատելու, դրան խոչընդոտող գործոնները ուսումնասիրելու և հասկանալու, ինչպես նաև տարբեր միջոցներով աշակերտների մոտիվացիան բարձրացնելու հետ: Հատկապես, այդ գործունեության ընթացքում մեծ ուշադրությում եմ դարձրել խաղային տեխնոլոգիաների կիրառության հնարավորություններին, որոնք բավականին մեծ են և արդյունավետ: Չէ որ երեխաները կրտսեր դպրոցական տարիքում առաջնային աճում, զարգանում և ուսուցանվում են հենց խաղերի միջոցավ: Այդ պատճառով էլ խաղային տեխնիկաների և հնարների կիրառությունը դասապրոցեսում թույլ է տալիս ուսումնական գործընթացը դարձնել արդյունավետ, հետաքրքիր աշակերտների համար, հետևաբար, նաև բարձրացնել աշակերտների մոտիվացվածությունը դասին մասնակցելու, մատուցվող նյութն ընկալելու:

Խաղային տեխնոլոգիաների կիրառումը ունի ուսումնադաստիարակչական նշանակություն: Խաղը դիտարկվում է որպես առաջատար գործունեություն ոչ այն պատճառով, որ այն երեխայի կյանքում մեծ տեղ է գրավում, այլ որովհետև խաղի ընթացքում երեխայի հոգեկանում տեղի են ունենում գլխավոր փոփոխությունները զարգա-նում են այն գործընթացները, որոնք անհրաժեշտ են զարգացման նոր առավել բարձր աստիճանների հասնելու համար: Խաղալով երեխան անընդհատ ձգտում է գնալ առաջ, նրա մոտ միաժամանակ աշխատում են ենթագիտակցությունը, խելքը և երևակայությունը, հետևաբար երեխաների զգացմունքային ոլորտի զարգացումը, ինչպես նաև մտավոր կա-րողությունների զարգացումն ավելի արդյունավետ կատարում են խաղի մեջ:

Խաղային գործունեությունը հետաքրքիր է երեխաներին և կարող է առաջացնել նորի ճանաչման դրական շարժառիթ: Միաժամանակ խաղը հանդիսանում է ոչ միայն զվարճալի միջոց, այլ նաև սովորական վարժություն, որը զգեստավորվել է հետաքրքիր ձևով: Խաղի բովանդա-կությունը ծառայում է ուսումնական խնդրի կատարմանը, որտեղ կարևոր է նաև դաստիարակչական կողմը: Հարկ է նշել, որ խաղը կարելի է դիտարկել և՛ որպես ուսուցման խաղային մեթոդ, և՛ որպես ուսուցման ձև, և՛ որպես երեխայի անձի զարգացման միջոց: Այն պետք է դիտել որպես ուսումնական գործընթացի կազմակերպման ձև:

Տարրական դպրոցում խաղը կիրառվում է.

- որպես ինքնուրույն տեխնոլոգիա (որը կիրառվում է ցանկացած առարկայի, թեմայի յուրացման և ամրապնդման ժամանակ),
- որպես առավել մեծ ու ընդհանուր համագործակցային տեխնոլոգիայի մի տարր,
- որպես արտադասարանական աշխատանքի տեխնոլոգիա,
- որպես սովորողների ծանրաբեռնվածության բեռնաթափման միջոց:

Ի տարբերություն առօրյա խաղերի՝ մանկավարժական խաղն ունի որոշակի հատկանիշներ: Այն ունի նախօրոք հստակեցված ուսուցման նպատակ և դրան համապատասխան՝ կանխատեսվող մանկավարժական արդյունք.

- ավանդական ուսումնական գործընթացի ժամանակ գիտելիքի հիմնական աղբյուր հանդիսանում է ուսուցիչը, իսկ խաղի ժամանակ գիտելիքի որոշակի աղբյուր չկա,
- ուսումնական գործընթացն իրականացվում է մենախոսության (ուսուցիչը բացատրում է, սովորողը լսում) կամ երկխոսության (սովորողը հարցեր է ուղղում, ուսուցիչը պատասխանում է, կամ ստուգման նպատակով ուսուցիչն է հարցեր ուղղում սովորողներին) միջոցով, իսկ խաղն իրականացվում է գործողությունների լեզվով, և խաղի մասնակիցները ակտիվ հաղորդակցման միջոցով սովորում և սովորեցնում են իրար,
- խաղային գործունեությունը պարտադրված չէ. այն հիմնականում ինքնակամ է և ցանկալի,
- խաղային գործունեության ժամանակ մասնակիցը ազատ է ու անկաշկանդ, քանի որ նա հանդես է գալիս որպես դերակատար և չի ճնշվում սեփական «Ես»-ը արտահայտելու մտքից։

Դասի ժամանակ խաղային գործունեությունն իրականացվում է հետևյալ քայլերով՝

- սովորողի առջև խաղի տեսքով դրվում է դիդակտիկական որոշակի նպատակ,
- ուսումնական գործունեությունը ենթարկվում է խաղի կանոններին,
- ուսումնական նյութն օգտագործվում է որպես խաղի միջոց։

Ուսուցման խաղային մեթոդը խաղ չէ բառի բուն իմաստով։ Այն ավելի շուտ հանձնարարություն է, որն ունի դիդակտիկական, ճանաչողական նշանակություն, ուսուցման գործընթացին խաղային ձև տալն ուղեկցվում է խաղի մեկ կամ մի քանի տարբեր ներմուծելու ճանապարհով, խաղային այուժե, բովանդակություն, դերեր, որոշակի կանոնների կատարման միջոցով նպատակին հասնելու արդունք և այլն։

Այսպիսով, նշված թեմայի շուրջ իմ պրակտիկ գործունեության հիմնական նպատակն էր պարզել, թե խաղային տեխնոլոգիաների կիրառությունը ինչպես կարող է ազդել աշակերտների մոտիվացիայի վրա ուսումնառության ընթացքում և ինչպես է այն փոփոխվում՝ կախված այս կամ այն խաղային միջոցի ներազդեցությունից։ Որպես պրակտիկ գործունեության այլ նպատակներ, առանձնացրել եմ նաև հետևյալները.

- Աշակերտների մոտ սովորելու ցանկություն առաջացնել և զարգացնել սեր ուսման հանդեպ;
- Դասարանում ձևավորել աշակերտների ներգրավվածության պատշաճ մակարդակ, որը թույլ կտա լիովին իրագործել ուսումնական նպատակները և բարձրացնել նրանց մոտիվացիան;
- Բարձրացնել աշակերտների մոտվացիայի մակարդակը նոր ուսումնական և մանկավարժական մեթոդների կիրառմամբ:

Առաջադրված նպատակները շատ կարևոր դերակատարություն ունեն, քանի որ դրանց իրագործման արդյունքում աշակերտների մոտ զարգանում է քննադատական մտածելակերպը, ինքնուրույն աշխատելու հմտությունները և այլ կարևոր հատկանիշներ:

Տվյալ հարցադրումները և առաջդրված խնդիրները ուսումնասիրելու համար իրականացվել է բնական հետազոտություն, քանի որ բոլոր գործնական աշխատանքները, որոնք իրականացվել են ռաջադրված խնդիրների պարզաբանման շուրջ, կատարվել են բնական դասարանային միջավայրում, դասապրոցեսի կազմակերպման շրջանակներում:

Ուսումնասիրություններն իրականացվել են մեկ դասարանի (թվով 33 աշակերտներ) շրջանակներում, որն էլ հանդիսացել է այս հետազոտական աշխատանքի ուսունասիրության օբյեկտը:

Ես, հանդիսանալով տվյալ հետազոտական գործունեության անմիջական կազմակերպիչը և իրագործողը, հանդես եմ եկել դիտարկողի դերում, քանի որ ամնիջական աշխատանքներ եմ իրականացրել աշակերտների հետ, ներգրավվախ լինելով նրանց հետ միևնույն գործունեության մեջ: Միևնույն ժամանակ, համապատասխան դիտարկումներ եմ իրականացրել՝ կիրառվող մեթոդների և միջոցների արդյունավետության վերաբերյալ: Այսինքն, սա նշանակում է, որ ես, որպես հետազոտող, հանդիսացել եմ նաև հետազոտության ընթացքի իրականացնողը, համապատասխան պլանով մշակված դասաժամեր եմ անցկացրել ուսումնասիրվող դասարանի շրջանակներում, նկատառումներ և որոշ եզրահանգումներ եմ կատարել առաջադրված հարցադրումների շուրջ:

Հետազոտական աշխատանքի շրջանակներում իրականացվել է ամբողջական դիտարկում, որն ուղղված է եղել աշակերտների մոտիվացիայի վրա ազդող գործոնների համալիր ուսումնասիրությանը և այն բարձրացնելու հնարավոր միջոցների կիրառությանը: Ինչպես նաև նշեմ, որ իրականացրել եմ կրկնվող բնույթի դիտարկում, քանի որ հետազոտության ընթացքում իրականացրել եմ տարբեր պարբերականությամբ փորձնական դասեր, որոնց նպատակն էր պարզել աշակերտների մոտիվացիայի աստիճանի փոփոխությունը՝ առանց խաղային տեխնոլոգիաների կիրառման և, համապատասխանաբար, դրանց կիրառմամբ:

Իրականացված դիտարկումների ընթացքում հավաքագրվել են պրակտիկ հետազոտական նշանակություն ունեցող կարևոր տվյալներ: Եվ այդ նպատակով կիրառվել են տվյալների հավաքման ուղղակի և միջնորդավորված եղանակներ՝ գրանցելով դասի ընթացքը ստուգողական աշխատանքների հանձնարարման միջոցով:

Տվյալների հավաքման փուլում կիրառել եմ հետևյալ հիմնական մեթոդները՝

- Հարցում;
- Դիտարկում;
- Աշակերտների թեստավորում;
- Ստուգողական աշխատանքներ:

Ինչպես արդեն նշվեց, առաջադրված խնդիրների լուծման համար և դրանց արդյունաքների գրանցման նպատակով իրականացվել են դասաժամեր, որոնց ընթացքում կիրառվել են և գործնական արտահայտում են ստացել վերը շարադրված հետազոտական ընթացքի քայլերը:

Հետազոտական նշանակություն ունեցող դասերի նպատակն էր նոր ուսումնական նյութի մատուցման, բացատրման հետ մեկտեղ նաև աշխատել աշակերտների՝ հաղորդակցական հմտությունների զարգացման ուղղությամբ, ինքնուրույն աշխատանք կատարելու և այդ եղանակով ձեռք բերված գիտելիքները պրակտիկորեն կիրառելու հմտությունների մշակման և զարգացման ուղղությամբ:

Դասերի ընթացքում դիտարկումներ եմ իրականացրել այն բանի վերաբերյալ, թե ինչպես է փոխվում աշակերտների մոտիվացվածությունը և ակտիվությունը՝ ըստ

դասի բաղադրիչ հատվածների և կիրառվող խաղային, դիդակտիկ նյութերի: Բուն նյութի մատուցման ժամանակ փորձել եմ առավել մեծ մոտիվացվածություն առաջացնել աշակերտների մոտ հարցադրումների և ստուգիչ միջոցների կիրառմամբ, որոնց նպատակն էր խթանել աշակերտների ակտիվությունը և նոր գիտելիքների ձեռք բերման հանդեպ ցանկություն ձևավորել: Նաև փորձարկել եմ դասարանում խմբային աշխատանք կազմակերելու և յուրաքանչյուր խմբին համապատասխան առաջադրանք հանձնարարելու մանկավարժական միջոցը, որի նպատակը ևս կայանում էր նրանում, որպեսզի աշակերտների մոտ զարգանան համագործակցային հմտությունները և խմբում աշխատելու կարողությունները, ինչը ևս մեծ ազդեցություն է թողնում աշակերտների մոտիվացիայի մակարդակի և դրա փոփոխությունների վրա:

Աշակերտների մոտիվացիայի բարձրացման և խթանման ուղղությամբ ուսուցչի աշխատանքներն ուղղեկցվել են համապատասխան դիդակտիկ նյութերի կիրառմամբ, պաստառների ցուցադրմամբ, որոնց միջոցով հնարավոր է եղել ոչ միայն ստուգել աշակերտների մոտիվացվածությունը դասի և ուսուցանվող նյութի նկատմամբ, այլև ներգործություն կատարել այդ գործոնների վրա՝ մատուցվող նյութը էլ ավելի արդյունավետ կերպով աշակերտներին հասցնելու համար:

Դասերի ընթացքում շարունակելով աշխատել դասարանի աշակերտների մոտիվացիայի վրա, ես առաջադրել եմ հետևյալ նպատակները.

- Զարգացնել աշակերտների՝ խառը խմբերով աշխատելու հտությունները;
- Զարգացնել աշակերտների՝ միմյանց հետ աշխատելու, համագործակցելու կարողությունները;
- Նպաստել աշակերտների մոտ՝ ինքնավստահության ձևավորմանը սեփական ուժերի և գիտելիքների հանդեպ;
- Զարգացնել աշակերտների՝ ինքնագնահատական տալու կարողությունները և սեփական գիտելիքները, ուսման արդյունավետությունը մեկնաբանելու հմտությունները:

Այս խնդիրների իրացման համար նույնպես կիրառվել են մի շարք խաղային տեխնոլոգիաներ, մասնավորապես գունեղ պաստառների, արտահայտիչ և տպավորիչ դիդակտիկ նյութերի կիրառություն, աշակերտներին մոտիվացնող հարցադրումների

առաջադրում, տեխնիկական միջոցներով տեսադասի իրականացում՝ ըստ դասի թեմայի:

Այսպես օրինակ, իմ մանկավարժական պրակտիկայի ընթացքում աշակերտների մոտիվացիան և հետաքրքրությունը բարձրացնելու համար կիրառել եմ շատ խրախուսող և հետաքրքրաշարժ խաղեր: Բերեմ դրանցից մի քանի օրինակներ:

1. *Սեղանին դնում եմ տարբեր երկրաչափական պատկերների մոդելներ: Երեխաները ուղղակի նայում են մոդելներին, այնուհետև շրջվում: Ես կամ աշակերտներից մեկը թաքցնում ենք մոդելներից որևէ մեկը: Շրջված աշակերտը պետք է ասի, թե որ մոդելն է բացակայում: Եթե ճիշտ է ասում, ապա աշակերտները ծափահարում են:*

2. *3 շարքով գրատախտակին գրում եմ վարժություններ: Յուրաքանչյուր շարքից աշակերտները հաջորդաբար մոտենում են, կատարում իրենց շարքի վարժությունները և նստում: Ով արագ վերջացնի հաղթում է:*

Ամփոփելով իմ մանկավարժական փորձի և աշակերտների մոտիվացիայի խթանմանն ուղղված աշխատանքների արդյունքները, կարող եմ փաստել, որ խաղերի, դիդակտիկ տարբեր նյութերի, պաստառների և տեսադասերի կիրառության փորձը զգալի դրական ազդեցություն ունեցավ աշակերտների մոտիվացիայի, նրանց ակտիվության, խմբրով աշխատելու կարողության և միմյանց հետ հաղորդակցվելու կարողությունների ձևավորման վրա:

Հետազոտության ընթացքում կիրառված մի շարք փորձնական միջոցների օգնությամբ հաջողվեց զգալի առաջընթաց գրանցել աշակերտների՝ մոտիվացիայի աճի առումով: Համագործակցային մանկավարժական մեթոդի սկզբունքներով պայմանավորված, դասարանը բաժանվեց խմբերի՝ նպատակ ունենալով զարգացնել աշակերտների ներգրավվածության, ակտիվության և հետաքրքրության ցուցանիշները, ինչպես նաև նրանց մոտ զարգացնել հաղորդակցության և համագործակցության հմտությունները: Ամենի նպատակն էր ստուգել, թե ինչպես այս

միջոցառումները կարող են ազդել աշակերտների մոտիվացիայի աճի վրա: Միաժամանակ, զուգահեռ կերպով դասի ընթացքում ուսուցչի կողմից գործադրվեցին մի շարք տեսադասեր, խաղային միջոցներ դիդակտիկ նյութերի կիրառությամբ, որոնք զգալի հետաքրքրություն առաջացրեցին ընդհանուր դասարանում: Որոշ աշակերտների ոտ գրանցվեց մոտիվացիայի զգալի աճ, նրանք սկսեցին փորձեր կատարել առավել ակտիվ մասնակցել դասի ընթացքին, նկատվեց ինքնագիատականի և ինքնավստահության նշանակալի բարձրացում:

Եզրակացություն

Իրականացված հետազոտական աշխատանքի արդյունքում եկա հետևյալ եզրակացությունների:

Աշակերտների մոտիվացիայի վրա ազդող գործոնները բազմաթիվ են, ընդ որում դրանք կարող են լինել ներքին և արտաքին: Այսինքն, մի դեպքում աշակերտի մոտիվացիայի վրա ազդում են նրա անձին բնորոշ հատկանիշները, մյուս դեպքու՝ արտաքին գործոնները, այդ թվում հարաբերությունները ուսուցչի, համադասարանցիների հետ, դասարանում տիրող մթնոլորտը և միջավայրը, ուսուցչի դասավանդման հմտությունները, կիրառվող միջոցները և մանկավարժական հնարքները: Տվյալ աշխատանքի շրջանակներում ուսումնասիրված դասարանի փորձից կարող ենք փաստել, որ աշակերտների մոտիվացիան հետազոտության սկզբում գտնվում էր միջին մակարդակի վրա, քանի աշակերտների մի մասի մոտ նկատվում էին բավականին վառ արտահայտված հմտությունները և ակտիվություն ուսման հանդեպ, մյուսների մոտ գրանցվել էր այդ հատկանիշների ի սպառ բացակայություն:

Խաղերը, տեսադասերը, այլ տեխնիկական իջոցներով կազմակերպված դասերը, դրանց համադրումը և լայն կիրառությունը դասի անցկացման ընթացքում բավականին դրական անդրադարձ են կատարում ժամանակակից դպրոցներում սովորող աշակերտների մոտիվացիայի վրա: Այս միջոցների ներգրավումը դասընթացում աշակերտներին օգնում է ոչ միայն առավել ուշադիր լինել դասերին, այլ նրանց մոտ հետաքրքրություն է զարգացնում ուսուցանվող նյութի վերաբերյալ, խթանում է ինքնուրույն աշխատելու հմտությունը, ստեղծագործական մոտեցումը դասի նկատմամբ, դրդում է աշակերտներին առավել արդյունավետ կերպով հաղթահարել ուսման ընթացքում հանդիպող դժվարությունները և հավատալ սեփական ուժերին: Տեխնոլոգիական հնարքների կիրառման միջոցով ստացված գիտելիքները, որպես կանոն, առավել վառ են տպավորվում աշակերտների մոտ, ինչպես նաև նրանց մոտ խթանում են հետաքրքրություն նոր գիտելիքների ձեռք բերման նկատմամբ:

Օգտագործված գրականության ցանկ

1. Божович, Л. И., Проблема развития мотивационной сферы ребенка. - М.: Педагогика, 1972
2. Маркова А.К., Матис Т.А., Орлов А.Б. Формирование мотивации учения. – М.: Просвещение, 1990
3. Матюхина М.В. Мотивация учения младших школьников. – М.: Педагогика, 1984
4. Маслоу А. Мотивация и личность. – СПб.: 2006
5. Леонтьев, А. Н., Потребности, мотивы и эмоции. - М.: Изд-во МГУ, 1971